

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց

Արևելեան վերջին խնդիրն ու պատերազմը ¹ :

1855 — ՓԵՏՐՈՒԱՐ

17. Նետափորոտ կոմսը չըջաբերական մը կը հա-
նէ, որուն մէջ Սարտենիոյ անդղիացւոց օգնական
զօրք տալը, առանց Ռուսներէն թշնամութիւն
մը կրած ըլլալու, իրականց տղգաց դէմ կը ցուցը-
նէ, և բոլոր հետեանքները Սարտենիոյ պատաս-
խանատուութեանը տակ կը ձգէ :

— 25,000 Ռուսք՝ զօրապետի տեղակալ Քրու-
լէֆի հրամանատարութեանը տակ Եւքադորիոյ
վրայ կը յարձրկին, բայց 500 հոգի կորսնցընելով
կը մղուին Տաճկներէն Էօմէր փաշային հրամա-
նատարութեամբը : Սէլիմ փաշան եգիպտացի զօ-
րաց զօրավարը, և Ռիւսդէմ Պէյ հազարապետը
մահացու կը վերաւորուին :

18. Դանուբի պաշարումը, որ 1854ին յունի-
սի 1էն ի վեր կը շարունակէր, կը դադրի :

22. Գերմանական դաշնակցութեան քով եղած
Բրուսիոյ նուիրակը անհիմն կը հրատարակէ, որ
Աւստրիոյ կայսրութիւնը և իր դանուբեան դա-
ւառաց մէջի եղած զօրքը վտանգի մէջ ըլլայ, ուս-
տի Գերմանիոյ պատերազմի զօրքը ռաքի վրայ դնե-
լը, Եւրոպայի ընդհանուր պատահական դէպքե-
րուն նախազգուշութիւն մըն է : — Պատասխան
կու տայ անոր Բրոքէշ-Օսգէն Աւստրիոյ նուիրա-
կը, թէ Գերմանիոյ այս քայլս առնուլը արեւելեան
խնդրոյն քննութեանը համար որոշուած ժողովին
որոշմանքն ըլլալով, հետեանք մը կը սեպուի 1854
տարւոյն յունիսի 24ին և դեկտեմբեր 6ին որոշ-
մանցը :

— Մեծին Բրիտանիոյ արտաքին գործոց պաշա-
նեային ունեցած յանձնարարական հրամանը. —
Մինչև որ զօրաւոր միջոցներով չգասուի օսմա-
նեան կայսրութիւնն ալ Եւրոպայի տէրութեանց
կարգը, և Սև ծովին մէջ Ռուսիոյ զինուորական
և նաւական պետութեան չափ մը չդրուի, և բար-
ձրագոյն Դրան վրայ ունեցած ազդեցութիւնը չը-
կտրուի՝ անօգուտ է դանուբեան գաւառաց վրայ
Ռուսաց առանձին պաշտպանութեանը դադրե-
լուն վրայ խնդիրը երկնցընել : Ուստի նախ պէտք
է ճանաչուի օսմանեան կայսրութիւնը ազատ
տէրութիւն, թէ իբր մի յեւրոպական տէրու-
թեանց, և թէ իբր կարևոր եւրոպական հա-
ւասարակշռութիւնը պահելու : Այս վախճանիս
հասնելու համար պէտք է Ռուսաց Սև ծովին մէ-
ջի տիրապետութիւնը կտրել. խնդիրը հոն է որ
այս վախճանիս հասնուի, որչափ կարելի է քիչ

կնճռումն տալով եւրոպական տէրութեանց :
Խաղաղութեան չորս պայմաններուն երրորդին
միտքը այս է : Իսկ առաջինն է որ մինչև հիմայ
Ռուսաց և Տաճկի տէրութեան մէջ Մոլտաւիոյ
և Վալաքիոյ և Սերվիոյ վրայօք եղած դաշնա-
դրութիւնները բոլորովին ջնջուին, որպէս զի
մէյմըն ալ այն դաշնագրութեանց յօդուածները
պատճառանք չըլլան Ռուսաց յարձակմանց : Իսկ
երրորդին վրայօք՝ Ռուսաց Դանուբի վրայ ու-
նեցած արտօնութիւնները ջնջելու լաւագոյն մի-
ջոցն է՝ Դանուբի բերաններուն այն կտորը որ
Ադրիանուպոլսոյ դաշնագրութեամբը Ռուսաց
անցաւ՝ նորէն Դրան դարձուի, և Դրան ձեռքովն
ալ եւրոպական տէրութեանց միաբան պաշտպա-
նութեան տակ ձգուի :

24. Գաղղիացիք Մոնէ զօրավարին առաջնոր-
դութեամբը Ռուսներուն Մալաքոֆի աշտարակին
դիմացը գաղղիացւոց աջակողմեան թևին դէմ չի-
նած պատնէշներուն մէջ կը մտնեն : Բայց թշնա-
մւոյն բազմութենէն ետ կը մղուին : Մոնէ զօրա-
վարը կը վերաւորուի :

28. Պուլ կոմսը պաշտօնագիր մը կը խրկէ Աւս-
տրիոյ Գերմանիոյ արքունեաց քով եղող նուի-
րակներուն. — Աւստրիա կը բողոքէ Բրուսիոյ
կարծեացը դէմ որ գերմանական դաշնակցութե-
ան զինեալ չէզոքութիւնը երկու վախճան ունեցած
ըլլայ. և կը յուսայ, որ եթէ խաղաղութեան ժո-
ղովը չյաջողի՝ Գերմանիան իր բոլոր զօրքը Աւս-
տրիոյ հետ միացած թշնամւոյն դէմ հանելով իր
զինուորուն դիտաւորութեանը վրայ տարակոյս
չձգեր, ոչ իր դաշնակցացը և ոչ բոլոր Եւրոպայի
դիմաց :

ՄԱՐՏ

2. Նիկողայոս Ա Ռուսաց կայսրը կը մեռնի .
ծնած էր 1796ին յուլիսի 6ին (յունիս 25) . իր
երիցագոյն եղբայրը հրաժարելով յաջորդու-
թեան իրաւունքէն՝ 1825ին Դեկտեմբերի 1ին յա-
ջորդեց ինքը իր եղբօրը Ալեքսանդր Առաջնոյն :
— Յաջորդեց իր որդին Ալեքսանդր Բ որուն հա-
նած յայտարարութեան իմաստն էր. — Ինչ ճամ-
բայ որ բռնեցին Մեծն Պետրոս Ա, կատարինէ
կայսրուհին, Ալեքսանդր Ա, և մեր բարեյիշատակ
հայրը՝ մենք ալ նոյն ճամբան պիտի շարունակենք :

Մանգայֆէլ մտերմական պաշտօնագիր մը կը
խրկէ Բարիզ կեցող կոմս Հէցֆէլա Բրուսիոյ դես-
պանին, որուն մէջ կը գանգըտի Գաղղիոյ բռնած
կերպին, որով Բրուսիոյ շատ բարեկամ չերևար,
և թէ ինչու Գաղղիա գերմանական դաշնակցու-
թեան փետրուար 22ին եղած ժողովին մէջ Բրու-
սիոյ դեսպանին բռնած լեզուին վրայ կը խոժոռի,
ըստ որում ազատ է ամէն տէրութիւն իրեն պատ-
շաճ երևցածն ընելու : Ուրիշ կողմանէ կ'ապա-
հովցընէ թէ Բրուսիոյ ամենեւին մտքէն չէ անցած

¹ Տես հա. ԺԳ. երես 15, 92, 159, 191,
223, 255, 286, 334. հա. ԺԴ. երես 11, 82,
129, 162, 227, 275, 307, 355, 371. ԺԵ.
երես 15 :

արեւմտեան տէրութեանց դէմ կռուելու . բոլոր ջանքն է որ իր քաղաքական համոզմունքը բոլորովին անկախ պահէ ու ինչէ ազդեցութենէ :

4 . Սարտենիոյ հանած Ռուսիոյ դէմ յայտարարութիւնը : Ռուսաց Աղեքսանդր կայսրը հրամանագիր մը կը հանէ . որով Մէնչիքով իշխանին տեղը Կորչաքով իշխանը հրամանատար կը դնէ Խրիմի ծովային ու ցամաքային զօրաց : Իշխանը ամսոյս 29ին Սեւաստոփոլ կը հասնի :

10 . Նեսսեյրոտ կոմսին շրջաբերականը . — Կայսրը Ռուսիոյ երեսփոխաններուն իշխանութիւնները ու պատուէրները ինչ որ գեկտեմբերի մէջ, երբոր Վեննայի ժողովքը բացուելու վրայ էր, ունէին՝ անփոփոխ կը պահէ ու կը հաստատէ . Վեննայի ժողովքին վախճանն էր՝ Արեւելքի մէջ կրօնից ազատութիւնը հաստատել . բոլոր ազգաց վաճառականութեան օգտին համար Դանուբի ազատ նաւագնացութիւնը ապահովցնել . դանուբեան իշխանութիւնները միաբանական ապահովութեան տակ իրենց ազատութեանցը մէջ հաստատուն պահել . ապագայ նոր դժուարութիւններու առաջն առնուլ . վերջապէս մեծ տէրութեանց հետ միաբան՝ Տարտանէլլիի ու Վոսթորոնի նեղուցներուն դոց ըլլալուն դաշնագրութիւնը նորէն աչքէ անցընել, և ասով այնպիսի իրաւաստութեան մը գալ որ ամէն կողմին ալ պատուաւոր ըլլայ : Բայց խաղաղութեան հաստատուիլը անպտուղ կը մնայ, թէ որ այս իրաւաստութեան պայմանները իրենց չափէն դուրս ելլալով՝ տէրութեան մը պատուոյն դաչին :

15 . Վեննայի խաղաղութեան դաշնագրութեանց ժողովքը կը սկսի, ամէն լիակատար երեսփոխանաց ներկայութեամբ . Աւստրիոյ կողմանէ կոմս Պուլ Շաւէնշդայն և Պարոն Բրոքէշ-Օսդէն, Գաղղիոյ՝ Պարոն Պուրբընէ, Ռուսիոյ՝ Կորչաքով իշխանը և Դիգով առանձին խորհրդականը, Անգղիոյ՝ Ճոն Ռըսսէլ և Ուեստմորլէնա կոմսը, Օսմանեան դրան՝ Արիֆ էֆէնտին և Ռիզա պէյը : — Քննելու խնդիրներն են . Ա . Դանուբեան իշխանութիւնները : Բ . Դանուբի նաւագնացութիւնը : Գ . Սև ծովուն մէջ Ռուսաց զօրութիւնը քիչցընելը : Դ . Սուլթանին հպատակ քրիստոնէից վիճակը :

— Սարտենիոյ և բարձրագոյն Դրան նիզակակցութիւնը :

17 . Ռուսները Սեւաստոփոլի հարաւային կողմը Քամչադիա ամրոցին գաղղիացւոց ըրած յարձակմունքը կը մղեն : — 19ին Խաղոմիս ծովային սպարապետը Թնդանօթի գնտակէ մը զարնուած ըլլալով՝ կը մեռնի :

22 . 15,000 Ռուսք Մալաքոֆի դիմաց դաշնակցաց աջ թևին վրայ կը յարձակին, բայց մեծ կորուստով ետ կը քշուին :

26 . Խաղաղութեան պայմաններուն Ա . և Բ . յօդուածները Վեննայի ժողովքին մէջի հինգ մեծ տէրութեանց երեսփոխանները կ'ընդունին . Գ . յօդուածին խնդիրը դուրս կ'ելլայ : Կորչաքով իշխանը կը մերժէ Աւստրիոյ ըրած ու Գաղղիոյ և Անգղիոյ պաշտպանած առաջարկութիւնը՝ որ Ռուսաց և Տաճկի երեսփոխանները ժողովքին ա-

ռաջարկէն միջոցներ որ այս դաշնագրութեան հաստատութիւնը ապահովցնեն : Այս պատճառաւ ժողովքը առկախեալ կը մնայ մինչև որ Ալի փաշան և Տրուէն տը Լիւի հասնին :

27 . Տրուէն տը Լիւի Բրուսիոյ ամսոյս 2ին գրած պաշտօնագրին պատասխան կու տայ . որուն մէջ կը մերժէ Բրուսիոյ կարծիքը որ Գաղղիա իր բռնած ճամբովը օտար տէրութեան մը անկախ որոշմանը խառնուի : Գաղղիա այնպիսի վեր 'ի վերանց իրեն դէմ եղած ամբաստանութեանը, իբր թէ Բրուսիոյ թշնամի կերպ մը ունեցած ըլլայ, բաւական պատճառ չգտնար տալու : Գաղղիոյ միտքն այն եղած է միշտ որ իր և Բրուսիոյ մէջ քաղաքական կարծեաց տարաձայնութեանը միաբանելու ամէն միջոցները և դիւրութիւնները 'ի գործ դրուի . և թէ որ այս փափագելի միաբանութիւնը չըլլայ, պատճառը ինքը Բրուսիան է և ոչ այլ ոք . Գաղղիա իր կողմանէ ամէն ջանքը ըրաւ որ Բրուսիան ալ Արեւմտեան տէրութեանց դաշնագրութեանը մէջ գտնուի :

ԱՊՐԻԼ

3 . Լորտ Քլարենսընին պաշտօնագիրը առ Լորտ Ռըսսէլ . — Թէպէտ Աւստրիա կը ճանչնայ որ Ռուսիոյ ազդեցութիւնը կոտրելոյ համար ամենէն պարզ միջոցը անոր Սև ծովուն մէջի նաւական զօրութիւնը քիչցընել տալ է, բայց Պուլ կոմսին մէկ թղթէն կը տեսնուի, որ եթէ Ռուսիան այս պայմանիս զիջանելու չըլլայ ալ Աւստրիան Ռուսիոյ դէմ պատերազմ բանալու բաւական պատճառ չգտնէր : Այս պայմանիս տեղ Աւստրիա հակակշիռ դրութիւն մը կ'առաջարկէ : Բայց Անգղիա այդ դրութիւնը բաւական չտեսնալով՝ ամէն զոհ աչք առած է, նաև առանց Աւստրիոյ ձեռնտուութեանը, Եւրոպայի ապահովութեանը հարկաւոր և արդար երաշխաւորութիւն մը առնելու : Տրուէն տը Լիւի Վեննայի դահլճին առաջարկութիւն մը պիտի ընէ Գաղղիոյ կառավարութեանը կողմանէ, խորհրդակցութեանց ժողովոյն, Սև ծովուն չէզոքութեանը վրայ դրութիւն մը ներկայացընելու վրայ, որուն վախճանն է որ Սև ծովը ու է պատերազմական նաւերու դոց ըլլայ . այս դրութեանս Լոնտոնի դահլճն ալ իր հաւանութիւնը կու տայ :

6 . Տրուէն տը Լիւի Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն, 8ին ալ՝ Ալի փաշան Վեննա կը հասնին, երկուքն ալ խորհրդակցութեանց ժողովոյն մէջ մտնելու համար :

9 . Դաշնակիցք Սեւաստոփոլի գնդակակոծութիւնը կը սկսին : Պիզոյ ճարտարապետութեան զօրավարը վերք մը կ'առնու, ու 15ին կը մեռնի :

Կը շարունակուի :

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ